



**ՈՎԷՆՐ ԵՆ
ԼՍՈՒՄ ՏԻՐՈՋ
ՁԱՅՆԸ
ԻՆՉՊԵՍ ԱՌԱՋՆՈՐԴԿԵԼ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՎ**

ԳԱՅԱՆԵ ՀԱԿՈՐՅԱՆ

ԳԱՅԱՆԵ ՀԱԿՈՒԲՅԱՆ

ՈՎՔԵՐ ԵՆ ԼՍՈՒՄ
ՏԻՐՈՋ ԶԱՅՆԸ

ԻՆՉՊԵՍ
ԱՌԱՋՆՈՐԴԿԵԼ
ՍՈՒՐԲ ՀՈԳՈԿ

Երևան
«Բուքարթ» ՍՊԸ
2016

ՀՏԴ 1/14 : 316
ԳՄԴ 87 + 60. 5
Հ 177

Հակոբյան Գայանե
Հ 177 Ովքեր են լսում Տիրոջ ձայնը:
Ինչպե՞ս առաջնորդվել Սուրբ Հոգով / Գ. Հակոբյան.-
Եր.: «Բուքարթ» ՍՊԸ, 2016.- 64 էջ:

Բոլոր իրավունքները պահպանված են:

ՀՏԴ 1/14 : 316
ԳՄԴ 87 + 60. 5

Ց Ա Ն Կ

Նախաբան	5
Արդյո՞ք անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր ոք լսի Աստծո ձայնը	9
Ովքե՞ր են լսում Տիրոջ ձայնը	15
Ինչպե՞ս տարբերել Տիրոջ ձայնը	23
Ինչպե՞ս է Տերը խոսում	33

ՆԱԽԱԲԱՆ

Միրելի՛ ընթերցող, ինձ համար մեծ պատասխանատվություն է՝ անդրադառնալ Աստծո ձայնը լսելու թեմային, որովհետև իմ ծառայողական կյանքում բազմիցս հանդիպել եմ մարդկանց, ովքեր առաջնորդվելով երազներով, տեսիլքներով, «Տիրոջ ձայնով»՝ շեղվել են ճշմարիտ ճանապարհից: Նրանք համոզված են եղել, թե իրոք լսել են Աստծո ձայնը կամ Աստծուց մարգարեական ուղերձ պարունակող երազով են առաջնորդվել, բայց սխալվել են:

Այո՛, Տերը խոսում է մարդկանց հետ և, հիմնականում, Սուրբ Հոգու վկայության միջոցով՝ Իր գավակների հետ, սակայն յուրաքանչյուրը պետք է չափազանց զգոն լինի: Տիրոջ ձայնը լսելը և Սուրբ

Հոգով առաջնորդվելը անպատմելի նուրբ հարց է, քանի որ, ինչպես գրված է Կորնթացիներին ուղղված երկրորդ թղթի 11.14-ում, **«...սատանան ինքն էլ լույսի հրեշտակի կերպարանքը իր վրա է առնում»:** Մարդը կարող է խաբվել սատանայի կողմից կամ մոլորվել՝ ելնելով հենց իր ցանկություններից: Յուրաքանչյուր վերստին ծնված քրիստոնյա պետք է ունենա գիտություն՝ տարբերելու Աստծո ձայնը թե՛ սատանայի ձայնից, թե՛ իր իսկ մարմնի ու շնչի ցանկության թելադրանքից:

Համաձայն Աստվածաշնչի՝ Տերը տարբեր ժամանակներում տարբեր ձևերով է խոսել մարդկանց հետ: Աբրահամի, Հակոբի, Իսահակի, Ենոքի հետ Նա խոսել է անձամբ: Օրենքի ժամանակաշրջանում մարգարեների միջոցով է խոսել: Հիսուս Փրկչի Գողգոթյան խաչի գնով մեզ տրված շնորհքի շնորհիվ Նա Սուրբ Հոգու միջոցով խոսում է Իր զավակներից յուրաքանչյուրի հետ: Հովհաննես 14.16-18-ում Հիսուսն ասում է. **«Եվ Ես Հորը կաղաչեմ, և ուրիշ Մխիթարիչ կտա ձեզ, որ մնա ձեզ հետ հավիտյան: Ճշմարտության Հոգին է, որին աշխարհը չի ընդունում, որովհետև**

չի տեսնում Նրան և ոչ էլ ճանաչում է Նրան: Բայց դուք Նրան ճանաչում եք, որովհետև ձեզ մոտ է մնում և ձեզ հետ կլինի: Ձեզ որք չեմ թողնի, կգամ ձեզ մոտ»: Հիսուս Փրկչի այս խոսքերից առաջ Հովել մարգարեն նույնպես մարգարեացել է խաչի գորությանը մեզ տրված շնորհքի մասին. «...Իմ Հոգին պիտի թափեմ ամեն մարմնի վրա, և պիտի մարգարեանան ձեր տղաներն ու աղջիկները, ձեր ծերերը երազներ պիտի տեսնեն, ձեր երիտասարդները տեսիլքներ պիտի տեսնեն: Եվ ծառաների ու աղախիկների վրա էլ այն օրերին պիտի թափեմ Իմ Հոգին» (Հովել 2.28,29):

Տիեզերքն արարող և հավիտենությունն Իր ավերի մեջ պահող Աստված մարդ արարածին ստեղծելիս հաշվի է առել այն փաստը, որ մարդն ինքնին չի կարող բավարարված ու երջանիկ կյանք ունենալ այս հիասքանչ երկիր մոլորակի վրա՝ առանց Իր հետ շփվելու, Իր կամքը ճանաչելու: Նա մարդուն տվել է հնարավորություններ և ընդունակություններ՝ լսելու Իր ձայնը: Սատանան, որ գող է և «...գալիս է, որ գողանա, սպանի ու կորցնի...» (Հովհ. 10.10), կարողա-

նում է խաբել Աստծո զավակներին ու համոզել, որ Աստված միշտ չէ, որ խոսում է մարդու հետ, և ոչ բոլորն են, որ լսում են Նրա ձայնը: Սատանան լավ գիտի, թե ինչ տեղի կունենա յուրաքանչյուր մարդու հետ, ով լսի Աստծո ձայնը, և ինչ փաստի առջև կկանգնի ինքը, եթե մարդն այս կամ այն կարևորագույն գործը ձեռնարկելիս մշտապես հարցնի Տիրոջ կամքը:

Հիմք ընդունելով Աստվածաշունչը և Աստծո Խոսքի վրա հիմնված իմ կյանքի փորձառությունը՝ ես ցանկանում եմ ցույց տալ, որ աստվածների Աստվածը, մեր գործվագույթ Հայրը, հետևում է մեր ամեն քայլին և ուզում է շտկել մեր գործողությունները. Նա ուզում է, որ ճանաչենք Իր կատարյալ կամքը մեր անձնական կյանքի համար և ծառայենք Իրեն՝ հաշվի առնելով միմիայն ԻՐ ԿԱՄՔԸ:

**ԱՐԴՅՈ՞Ք ԱՆՀՐԱԺԵՇՏ Է,
ՈՐ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՈՔ
ԼՍԻ ՏԻՐՈՋ ՁԱՅՆԸ**

Աստծո ճայնը լսելն անհրաժեշտություն է: Յուրաքանչյուր վերստին ծնված և Աստծուն պաշտող մարդ պետք է լսի Տիրոջ ճայնը, այլապես կշեղվի ճիշտ ճանապարհից: Աստվածաշնչում գրված է. **«Որովհետև Իմ խորհուրդները ձեր խորհուրդները չեն, և ձեր ճանապարհները Իմ ճանապարհները չեն,- ասում է Տերը: Այլ՝ ինչպես բարձր է երկինքը երկրից, նույնպես էլ բարձր են Իմ ճանապարհները ձեր ճանապարհներից, և Իմ խորհուրդները՝ ձեր խորհուրդներից»** (Եսայի 55.8,9): Մեկ այլ հատվածում գրված է. **«Խորամանկ է սիրտն ամենից ավելի և ապականված: Նրան ո՞վ կարող է հասկանալ....»** (Երեմիա 17.9):

Նշանակում է՝ մարդը, ապավինելով իր սրտին ու մտքին, կամա թե ակամա, կգործի այնպես, ինչպես ինքն է հարմար գտնում տվյալ իրավիճակում: Բոլորս գիտենք, թե մարդու կյանքում ինչպիսի վճռորոշ պահեր են լինում, և եթե նա ապավինի իր մարդկային մտքին, գուցե կործանվի ոչ միայն ինքը, այլև իրեն հետևողները: Կա ևս մեկ պատճառ, թե ինչու յուրաքանչյուր աստվածապաշտ պիտի լսի Աստծո ձայնը. երբ Տերը խոսում է, մարդու սիրտը լցվում է հավատքով, և նա որքան էլ անելանելի իրավիճակում գտնվի, միևնույն է, ստանում է համոզվածություն, որ այդ իրավիճակից դուրս կգա:

Արդյո՞ք մարդը Տիրոջ կամքը պիտի հարցնի ոչ միայն Տիրոջ գործերը անելիս, Նրան ծառայելիս, այլ, ընդհանրապես, իր անձնական կյանքի համար ևս:

Կարդանք Աստծո Խոսքը. Երկրորդ Օրինաց 28.1-14-ում գրված է. «**Եթե քո Եհովա Աստծո ձայնին ուշադրությամբ լսես, որ զգուշությամբ կատարես Նրա բոլոր պատվիրանները, որոնք**

Ես այսօր պատվիրում եմ, քո Եհովա Աստված էլ քեզ երկրի բոլոր ազգերից գերազանց կանի: Եվ այս բոլոր օրհնությունները քեզ վրա կգան ու քեզ կհասնեն, եթե քո Եհովա Աստծո ձայնին լսես, դու քաղաքի մեջ օրհնյալ ու դաշտի մեջ օրհնյալ կլինես....»: Ինչպես տեսնում ենք, այս օրհնությունները վերաբերում են մարդու անձնական կյանքին: Իսկ ինչ կլինի, եթե մարդը չլսի Տիրոջը: Գրված է. «Բայց եթե քո Եհովա Աստծո Խոսքին չլսես և չպահես ու չանես Նրա բոլոր պատվիրանները և կանոնները, որոնք Ես այսօր քեզ պատվիրում եմ, այն ժամանակ այս անեծքները քեզ վրա կգան ու քեզ կհասնեն....» (Երկր. Օրինաց 28.15-57): Ինչ վերաբերում է եկեղեցական հարցերում (Աստծուն ծառայություն մատուցելիս և Նրա զավակներին ծառայելիս) Աստծո կամքը հարցնելուն և տառացիորեն կատարելուն, միանշանակ կասեմ, որ մենք պիտի հարցնենք Նրանից և անենք այնպես, ինչպես Նա է ուզում: Եկեղեցու ծառայողները երբեմն շփոթության մեջ են հայտնվում. նրանք մտածում են, թե Տիրոջ գործը կատարելու համար առաջին հերթին պիտի

խորհրդակցեն աշխարհի մասնագետների հետ՝ հաջողակ բիզնեսմենների, պրոդյուսերների, շինարարների և այլոց: Ո՛Չ: Սա անարգանք է Տիրոջ հանդեպ: Տերը գիտի, թե ԻՐ տանը, ԻՐ Եկեղեցում ինչ է պետք. որքան էլ որ հովիվն ու ծառայության ղեկավարները նվիրված ծառայեն Տիրոջը, միննույն է, Եկեղեցու Գլուխը Հիսուս Քրիստոսն է, մեր Փրկիչը, ով խաչելությունից առաջ ասաց. **«Ձեզ որք չեմ թողնի....»** (Հովհ. 14.18): Նա մեզ Սուրբ Հոգի տվեց, որ Սուրբ Հոգով առաջնորդվելով՝ ծառայենք Իրեն: Կարդանք Հին Ուխտը: Տերն էր պատվիրում, թե ինչպես Մովսեսը կառուցեր խորանը: Ելից 26-րդ գլխում մանրամասն ներկայացվում է Տիրոջ պատվերը. **«Եվ խորանը շինես տասը վարագույրներով՝ մանած բարակ քթանից և կապուտակից և ծիրանագույնից և կրկնակի կարմիրից....»:** Ելից 35.30-35-ում գրված է, որ Տերը կանչեց այն վարպետներին, ովքեր պիտի մասնակցեին Իր տան կառուցմանը. **«Եվ Մովսեսն ասաց Իսրայելի որդիներին. «Տեսնե՛ք, Եհովան Ուրի որդի Ուրիի որդի Բեսելեղիին կանչեց Հուդայի ցեղից՝ անունով, և լցրեց նրան**

Աստծո Հոգով՝ իմաստությունով, հանճարով և գիտությունով..., որ վարպետի գործեր հնարելով՝ ոսկու և արծաթի և պղնձի վրա գործի»»:

Իսկ ինչ է տեղի ունենում, երբ Տիրոջ տաճարում, եկեղեցում մարդիկ ծառայություններ են իրականացնում՝ առաջնորդվելով իրենց մտքով և ընտրությամբ, ընդօրինակելով աշխարհին, վարվելով մարդկային սովորույթի համաձայն: Օրինակ՝ Դավիթ թագավորը գիտեր, որ Աստծո ցանկությունն է կատարում՝ տեղափոխելով տապանակը, բայց նա Տիրոջը չհարցրեց՝ ինչպես իրականացնի տեղափոխությունը, այլ իրեն իրավունք վերապահեց՝ որոշելու, թե ինչպես տեղափոխի այն, ինչ Աստծուն էր պատկանում: «Եվ Դավիթը խորհուրդ արեց բոլոր հազարապետերի ու հարյուրապետերի ու բոլոր իշխանների հետ:.... Մեր Աստծո տապանակը մեզ մոտ փոխադրենք:.... և Աստծո տապանակը դրին մի նոր սայլի վրա Աբինադաբի տնից, և Ոզան ու Աքիովը քշում էին սայլը...» (Ա Մնաց. 13.1-14): Ոզան իր ձեռքը մեկնեց, որ տապանակը բռնի, որովհետև եզները ծռել էին: Եվ Տիրոջ բարկությունը բորբոքվեց Ոզայի

դեմ և զարկեց նրան: Ոգայի մահը Դավիթին սթափեցրեց. նա կանգ առավ: Եվ միայն որոշ ժամանակ անց՝ Աստծո կատարյալ կամքը իմանալուց հետո, նա Ուխտի տապանակը տեղափոխեց այնպես, ինչպես կարգն էր՝ Տիրոջ կամքի համաձայն. «Այն ժամանակ Դավիթն ասաց. «Ոչ ոք վեր չառնի Աստծո տապանակը, բացի ղևտացիներից, որովհետև Տերը նրանց ընտրեց, որ կրեն Աստծո տապանակը և նրան ծառայեն հավիտյան»: ...Դավիթը նրանց ասաց. «Դուք եք ղևտացիների տոհմերի գլխավորները, սրբե՛ք ձեր անձերը դուք և ձեր եղբայրները, որ Իսրայելի Տեր Աստծո տապանակը վեր տանեք նրա համար իմ պատրաստած տեղը: Որովհետև սկզբում ձեր չլինելու պատճառով մեր Տեր Աստվածը մեզ հարված տվեց, որովհետև Նրան չխնդրեցինք՝ ինչպես որ կարգն է»: ...և ղևտացիների որդիները վեր առան Աստծո տապանակը՝ ինչպես որ Մովսեսը Տիրոջ խոսքի համեմատ հրամայել էր՝ իրենց ուսերի վրա, ձողերով նրանց վրա» (Ա Մնաց. 15.2-15):

ՈՎՔԵՐ ԵՆ ԼՍՈՒՄ ՏԻՐՈՋ ՁԱՅՆԸ

Աստծո բոլոր զավակները պիտի լսեն Տիրոջ ձայնը: Ոմանք վախենում են, թե հանկարծ կսխալվեն: Երբեմն էլ հոգևոր ավագն է վախենում, երբ իր ենթակայության տակ գտնվող մարդիկ ուզում են լսել Տիրոջ ձայնը: Իսկ եթե հանկարծ սխալվեն ու մոլորվեն: Դա նման է նրան, որ մայրը իր երեխային թույլ չտա քայլել, ու վախենալով մտածի, որ նա հանկարծ կընկնի, ոտքը կկոտրի և այլն... Ո՛չ, մայրն իր երեխային պիտի սովորեցնի քայլել և հետևի նրա քայլերին: Նա պիտի զգոն լինի և միջոցներ ձեռնարկի, եթե երեխան ընկնելիս վախենում է և այլևս չի համարձակվում քայլել: Նա իր երեխային պիտի քաջալե-

րի և սովորեցնի կրկին քայլ անել, մինչև որ երեխան հունի մեջ կմտնի, այսինքն՝ կհաստատվի Աստծուց իրեն տրված բնական ընթացքի մեջ:

Աստծո ճայնը լսելու կարողությունը մեզ տրված է Աստծուց: Հովել 2.28,29-ում ասվում է. **«...Իմ Հոգին պիտի թափեմ ամեն մարմնի վրա, և պիտի մարգարեանան ձեր տղաներն ու աղջիկները, ձեր ծերերը երագներ պիտի տեսնեն, ձեր երիտասարդները տեսիլքներ պիտի տեսնեն: Եվ ծառաների ու աղախիկների վրա էլ այն օրերին պիտի թափեմ Իմ Հոգին»:**

Բերեմ մի օրինակ, թե ինչպես են արծիվները թռչել սովորեցնում իրենց ձագերին: Արծվի ձագերը քանի դեռ փոքր են, կերակրվում են իրենց ծնողների բերած որսով, բայց երբ գալիս է նրանց ինքնուրույն դառնալու ժամանակը, հայր արծիվը ուժգին ցնցում է բույնը, որպեսզի բնից դուրս թռչեն փետուրներից ու բույսերից հյուսված մասերը, և մնա միայն չոր կարկասը: Մայր արծիվը՝ ձուկը բերանին, նստում է բնից չորս-հինգ մետր հեռավորության վրա և սոված ձագերի առջև սկսում է ուտել իր որսը: Ձագերն անհանգստա-

նում են: Նրանք չեն հասկանում, թե ինչու հանկարծ իրենց գուրգուրող ու կերակրող ծնողներն այդպիսին դարձան: Նրանք սողալով դուրս են գալիս բնից ու ձգվում դեպի մայր արծիվը՝ կերակրվելու հույսով, սակայն վայր են ընկնում: Հայրը, որ այդ ընթացքում աչալուրջ հետևում է ձագերին, նետվում ու իր մեջքով բարձրացնում է նրանց՝ դեռ գետնին չհասած, ու կրկին դնում բնի մեջ: Ձագերը, սովի զգացումից դրդված, նորից են սողալով դուրս գալիս բնից: Դա կրկնվում է մի քանի անգամ, մինչև ձագերը, տեսնելով, որ հայր արծիվը «ուշանում է» օգնության հասնել և իր մեջքով բարձրացնել իրենց, թափահարում են թներն ու աստիճանաբար սովորում թռչել, իսկ հետո՝ սավառնել: Ձագերը երբ սովորում են թռչել, ծնողները նրանց ցույց են տալիս ձուկ որսալու տեղը, որպեսզի նրանք ինքնուրույն որսան և հոգան իրենց կարիքների մասին:

Թե՛ մարդկության մեջ, թե՛ կենդանական աշխարհում ամեն ինչ սովորեցնելու և սովորելու վրա է հիմնված: Հիսուսը 3 տարի սովորեցնում էր Իր հետևորդներին: Հիսուսից հետո գրվեց

Աստվածաշունչը, բայց, միևնույն է, Սուրբ Հոգին մեզ դարձյալ սովորեցնում և առաջնորդում է՝ բացելով սուրբ գրությունները և հայտնություն տալով, թե ինչպես իրականացնենք մեր հայտնությունները: **«Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրը կուղարկի Իմ անունով, Նա ամեն բան կսովորեցնի ձեզ և կհիշեցնի ամեն ինչ, որ ձեզ ասացի»** (Հովհ. 14.26), **«Բայց երբ որ Նա՝ Ճշմարտության Հոգին կգա, Նա կառաջնորդի ձեզ ամեն ճշմարտության մեջ, որովհետև Իր անձից չի խոսի, այլ ինչ որ կլսի՝ կխոսի, և գալու բաները կպատմի ձեզ»** (Հովհ. 16.13):

Այժմ վերադառնանք այն հարցին, թե ովքեր են լսում Աստծո ձայնը: Կամ ինչ-որ նախապայման Աստծո ձայնը լսելու համար: Ես Աստծո ձայնը լսել եմ դեռևս պատանեկան տարիքից: Սակայն եկավ մի պահ, երբ վախեցա, մտածեցի՝ գուցե դա Աստված չէ, գուցե խելագարվել եմ և տարօրինակ ձայներ եմ լսում: Այդ մտքերից հետո տարիներ շարունակ Աստծո ձայնը չեմ լսել: Մի օր քրոջս հետ խոսում էի մեր ընկերներից մեկի մա-

սին ու վրդովված ասացի. «Արդեն չափն անցավ. ինչ անում է, ասում է՝ Աստված ասաց, Սուրբ Հոգին առաջնորդեց...: Չեմ հասկանում՝ Աստված էլ գործեր չունի և ամբողջ օրը իր հեն է խոսում: Ինչո՞ւ մի օր այդ Աստվածը ինձ ոչինչ չի ասում: Ես էլ եմ աղոթում, ես էլ եմ Աստվածաշունչ կարդում»: Ես այնքան վրդովված էի և այնքան համոզված, որ Տերը շատ հազվադեպ է խոսում, ու միայն ընտրյալները կարող են լսել Նրա ձայնը: Ի զարմանս ինձ՝ Տերը՝ տիեզերքը ստեղծողն ու կառավարողը, հենց այդ օրը խոսեց ինձ հետ: Ես և՛ ցնցված էի, և՛ հուզված:

Փողոցում էի, երբ Նա խոսեց ինձ հետ: Տուն գալով՝ ես վերցրի Աստվածաշունչը ու սկսեցի փնտրել, թե ովքեր կարող են լսել Տիրոջ ձայնը: Ինձ հատկապես հետաքրքրում էր, թե ինչ պիտի անեմ, որ Տերը խոսի ինձ հետ բերնեբերան, որ լսեմ ոչ միայն Նրա ձայնը, այլև ինտոնացիան՝ այն հնչերանգը, որով Նա խոսում է: Եվ գտա Թվոց 12.6-8 խոսքերը. **«...Եթե ձեզնից մեկը մարգարե լինի, Ես՝ Եհովաս, Ինձ տեսիլքի մեջ կճանաչեցնեմ նրան կամ երագով կխոսեմ նրա հետ:**

Բայց այդպես չէ իմ ծառա Մովսեսը, որ Իմ բոլոր տան մեջ հավատարիմ է, նրա հետ բերնեբերան եմ խոսում և հայտնապես և ոչ թե առակով, և նա Եհովայի կերպարանքը տեսնում է...»: Թվոց 12.3-ում էլ գրված է. «Եվ Մովսես մարդը շատ հեզ էր երկրի վրա եղած բոլոր մարդկանցից ավելի»: Այնուհետև կարդացի Մատթեոս 5.8-ը. «Երանի՛ նրանց, որ սրտով մաքուր են, որ նրանք Աստծուն կտեսնեն»: Ես հասկացա, որ Աստծո ճայնը լսելու համար պիտի լինեմ անսահման հեզ, հավատարիմ՝ Տիրոջ տանը, և սրտով մաքուր: Սկսեցի աղոթել, խնդրել Աստծուն, որ օգնի ինձ՝ լինելու հենց այդպիսին՝ անսահման հեզ, հավատարիմ՝ Տիրոջ տանը, և սրտով մաքուր: Առայսօր ես ձգտում եմ՝ ինձ զորացնող Հիսուս Քրիստոսով պահպանել իմ մեջ այդ հատկանիշները, որքան էլ փորձությունները կատաղի լինեն:

Ինձ համար մեծ նշանակություն ունի ինտոնացիան, քանի որ երբեմն Սուրբ Հոգու ներքին վկայությամբ ասված խոսքը ինձ արագ տեղից չի շարժում, իսկ հնչերանգը, որով ասվում է խոսքը, հեղաշրջում է բերում իմ սովորույթների ու կյանքի մեջ:

Տարիներ առաջ, երբ Տերը Սուրբ Հոգու առաջնորդությամբ չորս ամիս շարունակ ինձ ասում էր, որ դուրս գամ Մատենադարանից, հրաժարվեմ իմ կարիերայից և նվիրվեմ Իրեն ծառայելուն, ես ողբում էի, լաց լինելով բացատրում, թե ինչու չեմ ուզում հրաժարվել իմ աշխատանքից: Մի օր Տերը կրկին խոսեց ինձ հետ դրա մասին և ավելացրեց. «Ես քեզ չեմ պարտադրում»: Ինձ ցնցեց ոչ այնքան այդ նախադասությունը, որքան հնչեցնողը, որով դա ասվեց: Աստծո ձայնի մեջ կար ցավ ու ափսոսանք, որ ես չեմ ուզում հրաժարվել իմ կարիերայից: Նույն պահին ես պատասխանեցի. «Այո՛, Տեր, ես կգոհեմ ամեն բան ու կհետևեմ Քեզ»: Իմ աշխատանքից դուրս գալուց կարճ ժամանակ անց փակվեց Մատենադարանի այն բաժինը, որտեղ ես աշխատում էի, իսկ իմ կյանքում այնպիսի հրաշալի փոփոխություններ եղան, որ ես միայն փառք էի տալիս Աստծուն, որ հենց այդ ձևն ընտրեց ինձ հետ խոսելու համար, այլապես ես չէի հրաժարվի այդ պահին ինձ պայծառ ապագա խոստացող աշխատանքից:

Տերը կարող է խոսել՝ ում հետ որ կուզի: Ոչ որ չի կարող սահմանափակել անսահմանափակ Աստծուն, օրենքներ սահմանել, թե Նա ում հետ կարող է խոսել: Տերը կարող է առաջնորդել բժշկին վիրահատության ընթացքում, ուղի ցույց տալ ու փրկել մեկին, ով վտանգի մեջ է հայտնվել: Երբեմն նայելով մեր կյանքի այն ժամանակահատվածին, երբ Տիրոջը չէինք ճանաչում՝ մենք տեսնում ենք, թե որքան ողորմած է եղել Նա մեր նկատմամբ: Տիրոջ ճանապարհներն անքննելի են, և պետք է հիշել, որ Նա միշտ է բարի՝ անկախ իրավիճակի ելքից: Բաղաամին վտանգից ետ պահելու համար Աստված խոսեց նրա էջի հետ ու դեռ էջին էլ խոսեցրեց. «Եվ Եհովան էջի բերանը բացեց, ու նա Բաղաամին ասաց. «Ես ի՞նչ եմ արել քեզ, որ այսպես երեք անգամ ինձ ծեծեցիր»: Եվ Բաղաամն ասաց էջին. «Ինձ ծաղր անելուդ համար....» (Թվոց 22.28,29):

ԻՆՉՊԵՍ ՏԱՐԲԵՐԵԼ ՏԻՐՈՋ ՁԱՅՆԸ

Հովհաննես 10.3-5-ում ասվում է, որ ոչխարները ճանաչում են հովվի ձայնը: Իհարկե, միշտ էլ լինում են կասկածներ: Նույնիսկ եթե կասկածներ էլ չլինեն, մենք պետք է մշտապես ստուգենք՝ իրո՞ք, Տերն էր: Ինչպես էլ Տիրոջ Խոսքը լսենք՝ Սուրբ Հոգու ներքին վկայությամբ, բերնեբերան, տեսիլքով, երազով, պատկերներով..., պարտադիր պետք է համեմատենք Աստվածաշնչի հետ: Եթե այդ Խոսքը հակասում է Աստվածաշնչին, նշանակում է՝ Տերը չի խոսել:

Մի անգամ մի հարցի շուրջ աղոթում էի, և Տերը պատասխանեց. «Մի՛ անհանգստացիր: Ծառայի՛ր Ինձ, Ես էլ քեզ կծառայեմ և կօգնեմ կարգավորելու այդ հարցը»: Ես ցնցված էի: Մինչ այդ

նույնիսկ չգիտեի, որ Նոր կտակարանում այդ-
 պիսի խոսք կա. Դուկաս 12.35-37-ում գրված է.
**«Թող ձեր գոտիները պինդ կապված լինեն ձեր
 մեջքին, և ճրագները՝ վառված: Եվ դուք նման
 եղեք մարդկանց, որ սպասում են իրենց Տիրո-
 ջը, թե նա երբ ետ կդառնա հարսանիքից, որ երբ
 գա ու դուռը թակի, շուտով բացեն նրա համար:
 Երանի այն ծառաներին, որ Տերը գալիս՝ արթուն
 կգտնի նրանց: Ճշմարիտ ասում եմ ձեզ, թե գո-
 տին մեջքը կկապի և նրանց սեղան կնստեցնի ու
 առաջ եկած կծառայի նրանց»:** Մեկ այլ անգամ
 աղոթում էի մի խնդրի լուծման համար ու լսե-
 ցի Տիրոջ ձայնը. **«Հույսիդ խարխիսները երկինք
 նետիր...»:** Նա նշեց մի անձնավորության անուն,
 ում մինչ այդ չէի ճանաչում, և ասաց, որ նա ինձ
 կօգնի: Ես ստուգեցի Աստծո Խոսքով ու գտա, որ
 Եբրայեցիներին ուղղված թղթի 6.18,19-ում խոս-
 վում է հույսի խարխիս մասին. **«... անկարելի է,
 որ Աստված սուտ խոսի, հաստատուն մսիթա-
 րություն ունենանք, մենք, որ ապավինեցինք մեր
 առջև դրված հույսին, որ հաստատ ու անշարժ
 խարխիսի պես ունենք մեր անձի համար....»:** Մի

քանի ամիս հետո ծանոթացա այդ անձնավորության հետ, ով ինձ աջակցեց՝ հաղթական ավարտին հասցնելու այդ գործը:

Անհրաժեշտ է գրի առնել յուրաքանչյուր բան կամ նախադասություն, որ կարծում եք, թե Տերն է ասել: Ժամանակը ցույց կտա՝ դա կատարվե՞ց, թե՞ ոչ: Պետք չէ վախենալ, արդարացումներ փնտրել, խեղաթյուրել. կան Տերն է խոսել, կան՝ ոչ: Ավելի լավ է մարդը համարձակություն ունենա և խոստովանի, որ սխալվել է, քան ինչ-որ բան հորինի ու փորձի հավատալ իր հորինածին: Սա չափազանց վտանգավոր է, և մարդը սրանով կարող է դուռ բացել սատանայի առջև:

Տիրոջ ձայնը հիմնականում լսում են հոգևոր ականջներով, ոչ թե ֆիզիկական: Այդ ձայնը մեղմ է ու չի ճնշում: Թագավորաց երրորդ գրքի 19.12,13-ում կա մի հրաշալի օրինակ Եղիայի կյանքից. **«Եվ երկրաշարժից հետո կրակ, բայց Տերը կրակի մեջ չէր: Կրակից հետո մի մեղմ ու հանգիստ ձայն: Եվ եղավ, երբ Եղիան լսեց այն, երեսը ծածկեց...»**: Աստված չի խոսում գոռալով ու պարտադրելով: Տիրոջ խոսքից հետո մարդու հո-

գին լցվում է խաղաղությամբ, նրա մեջ համոզվածություն է առաջանում, որ Տերն էր: Գուցե միտքը չհամաճայնի, մարմինը չցանկանա ենթարկվել, բայց հոգին հոժար է Տիրոջ ձայնին, քանի որ մարդու հոգին Սուրբ Հոգու բնակարանն է. **«Չգիտե՞ք, որ դուք Աստծո տաճար եք, և Աստծո Հոգին բնակվում է ձեր մեջ»** (Ա Կորնթ. 3.16):

Երբ Տերը խոսում է մեկի հետ, Նրա Խոսքը կարող է հաստատվել մեկ այլ հոգևոր մարդու միջոցով: Իրավիճակները նույնպես կարող են ապացուցել՝ տվյալ խոսքը Տիրոջից էր, թե՛ ոչ: Երբ Սուրբ Հոգին Պետրոսի հետ խոսում է հեթանոսների մոտ գնալու և քարոզելու մասին, Կռնելիոսի հետ էլ է խոսում նույն թեմայի շուրջ. **«Կռնելիո՛ս.... մարդ ուղարկի՛ր Հոպպե և կանչի՛ր Սիմոնին, որ Պետրոս է կոչվում:Եվ դեռ Պետրոսը այն տեսիլքի համար միտք էր անում, Հոգին նրան ասաց. «Գնա՛ նրանց հետ...., որովհետև Ես եմ ուղարկել նրանց»:**Եվ եղավ, երբ Պետրոսը ներս էր մտնում, Կռնելիոսը դիմավորեց նրան....» (Գործք 10.1-33):

Տիրոջ ձայնը լսելու և տարբերելու համար ժամանակ է պետք: Մենք պետք է խորանանք Աստծո մեջ, դառնանք իսկական աստվածապաշտ, ոչ թե՛ մի ոտքով աշխարհում լինենք, մյուսով՝ եկեղեցում: Մարդը, եթե ուզում է իր անձնական ու ծառայողական կյանքում միջոց Աստծո Հոգով առաջնորդվել, պիտի նվիրվի Նրան, սուրբ կյանքով ապրի: Նա պիտի պաշտի Տիրոջը ոչ միայն բառերով, այլև իր ամբողջ սրտով: Երկրորդ Օրինաց 6.5-ում գրված է. **«Միրի՛ր քո Եհովա Աստծուն ամբողջ սրտով, ամբողջ հոգով և ամբողջ զորությունով»:** Նա պիտի հնազանդվի Տիրոջ Խոսքին: Տերը չի շարունակի խոսել նրա հետ, ով անարգում է Իր Խոսքը, խստացնում իր պարանոցը՝ Տիրոջ ասածները չկատարելու համար, ինքնակամ ընտրում, թե որ Խոսքը կատարի, և որը՝ ոչ: Տերը բացարձակ հնազանդություն է ուզում: Սուրբ Հոգու ձայնին ավելի զգայուն լինելու համար անհրաժեշտ է շատ աղոթել Սուրբ Հոգով, լեզուներով: **«Որովհետև լեզուներով խոսողը մարդկանց հետ չի խոսում, այլ՝ Աստծո հետ, որովհետև ոչ ոք չի լսում, բայց Հոգով խորհուրդներ**

է խոսում» (Ա Կորնթ. 14.2), **«Լեզվով խոսողը իր անձն է շինում...»** (Ա Կորնթ. 14.4): Մենք մեր անձը պետք է վարժեցնենք՝ ենթարկվելու Սուրբ Հոգու ասածներին: Տիրոջ այս ցանկությունը մարդու օգտին է: Եթե մարդը միայն իմանար, թե ինչ է պահված իր հնազանդության ներքո...

Տարիներ առաջ էր, 90-ական թվականներն էին: Ես, հնազանդվելով Տիրոջ խոսքին, թողել էի այն աշխատանքը, որի համար տարիներ շարունակ բարձր աշխատավարձ էի ստացել, և, դարձյալ հնազանդվելով Տիրոջ խոսքին, անցել էի նոր աշխատանքի, որի համար համեմատաբար շատ քիչ գումար էի ստանում: Դեռ չէի հասցրել համակերպվել այդ չնչին գումարին, երբ ծանոթացա 10 տարեկան մի տղայի հետ: Տղայի տատիկը, ով այն ժամանակ ծերանոցում էր, խնդրում էր թոռնիկին ընդունել որևէ մանկատուն, քանի որ նրա մայրը մահացել էր, իսկ հայրը առողջական խնդիրների պատճառով չէր կարող խնամել երեխային: Ես մոտավորապես երկու շաբաթ դեգերում էի մանկատներում, դիմում սոցալ նախարարություն, կրթության և գիտության նախարարության:

րարություն, համապատասխան փաստաթղթեր հավաքում երեխային մանկատուն ընդունելու համար: Մի օր՝ առավոտյան, երբ պատրաստվում էի տնից դուրս գալու, որոշեցի լրջորեն աղոթել և երեխայի հոգսը, որ արդեն իմ հոգսն էր դարձել, հանձնել Տիրոջը: Աղոթքի ժամանակ Սուրբ Հոգին խոսեց: Տերն ինձ առաջարկեց երեխային վերցնել իմ խնամքի տակ: Այդ ժամանակ դա անհավանական էր ոչ միայն ֆինանսական առումով, այլև փաստաթղթային: Իմ ստացած չնչին գումարով ինչպե՞ս պիտի հոգայի երեխայի սննդի, հագուստի, կրթության և այլ կարիքների մասին: Փաստաթղթերի առումով նույնպես ոչինչ չէի կարող անել, քանի որ բարեկամական ոչ մի կապ չունեի այդ երեխայի հետ: Երեխայի հայրը համառորեն պնդում էր՝ վերադարձնել իր տղային, չնայած իր առողջական լուրջ խնդիրներին, բնակարանային ոչ նորմալ պայմաններին և ֆինանսի բացակայությանը, որոնց պատճառով չէր կարող հոգալ երեխայի մասին: Նա ցանկացած պահի կարող էր և իրավունք ուներ դատական գործ հարուցելու իմ դեմ: Այդ դեպ-

քում ծերանոցում ապրող տատիկը ոչնչով չէր կարող ինձ օգնել: Ես արդեն չեմ խոսում, թե այդ ամենն ինչպես կընդունվեր ծնողներիս կողմից, որոնցից թաքցնում էի իմ նախկին աշխատավայրից դուրս գալու փաստը: Չէի պատկերացնում, թե ինչ կլիներ, եթե նրանց ասեի, որ Տերն է ինձ առաջարկել նման քայլ անել՝ զոհել ինձ համար կապույտ երազ հանդիսացող Մատենադարանի աշխատանքս... Ճանաչելով իմ կենդանի Աստծո հավատարմությունը՝ դարձյալ խոնարհվեցի Նրա առջև և օգնություն ու առաջնորդություն խնդրեցի: Փառքեր, փառքեր, փառքեր իմ Աստծուն՝ տիեզերքի Արարչին: Նա գերբնական ձևով միջամտեց բոլոր խնդիրների լուծմանը: Այդ խնդիրները ժամանակ առ ժամանակ այնպես էին սրվում, որ քիչ էր մնում՝ երեխային թողնելի ծերանոցում՝ տատիկի մոտ, կամ էլ հանձնելի հիվանդ հորը, որպեսզի բոլորս ազատվեինք մեզ տանջող բոլոր հարցերից: Սակայն ես դա չէի անում, որովհետև գիտեի՝ Տիրոջ խոսքին հնազանդվելը ունի պտուղ, աննման պտուղ:

Իմ հնազանդության և Աստծուն ամբողջությամբ վստահելու շնորհիվ այդ երեխան այսօր ոչ միայն Հիսուս Քրիստոսին իր կյանքի միակ Տեր ու Փրկիչ է ընդունել, այլև երեք երեխաների հիասքանչ հայր է, սիրող ամուսին՝ իր կնոջ համար: Ճանաչելով մեր Աստծուն՝ ես գիտեմ, որ հնազանդության այդ պտուղը դեռ շատ այլ հիասքանչ պտուղներ պարզևող ծառ է դառնալու:

ԻՆՉՊԵՐՍ Է ՏԵՐԸ ԽՈՍՈՒՄ

Տերը խոսում է ամենատարբեր ձևերով: Աստված մարդուն տվել է 5 զգայարան՝ տեսողության, լսողության, հոտառության, համի և շոշափելիքի, որպեսզի նա լիարժեք ապրի ու հաղորդակցվի իրեն շրջապատող աշխարհում: Մենք գիտենք, որ մարդը միայն ֆիզիկական անձ չէ. նա ունի հոգի, և Տերը ստեղծել է մարդուն, որպեսզի մշտապես հաղորդակցվի նրա հետ: Դրա համար նրան տվել է նաև հոգևոր զգայարաններ: Հոգևոր տեսողության, լսողության, հոտառության, համի և շոշափելիքի զգայարանները հնարավորություն են տալիս լսելու և ճանաչելու Տիրոջը:

Սաղմոս 34.8-ում գրված է. **«Ճաշակեք և տեսե՛ք, որ Տերը քաղցր է. երանելի է այն մարդը, որ**

հուսացած է Նրան»: Մարդը միայն համի հոգևոր զգայարանով կարող է ճաշակել Տիրոջը ու հասկանալ, թե որքան մեծ բան կորցրած կլինենր, եթե հոգևոր ճաշակելիքի այդ զգայարանը չունենար:

Այսպիսով, ինչպէս է Տերը խոսում.

1. Աստված կարող է խոսել լսելի ձայնով:

Մատթեոս 17.1-8-ում նկարագրված է այն տեսարանը, որտեղ Հիսուսը, Իր երեք աշակերտների հետ գտնվելով սարի վրա, կերպարանափոխվում է, և երկնքից ձայն է լսվում. **«...և ահա մի ձայն եղավ այն ամպից և ասաց. «Դա է Իմ սիրելի Որդին, որին Ես հավանել եմ, Նրան լսեք»:** **Եվ աշակերտները լսելով՝ իրենց երեսների վրա ընկան և շատ վախեցան»:**

Գործք 9.4,5-ում գրված է, թե ինչպես էր Սողոմոն իր ընկերների հետ հալածում Տիրոջ աշակերտներին: Եվ ահա, Դամասկոսին մոտենալիս մի լույս է փայլում երկնքից: Սողոմոն (նույն ինքը՝ Սավուղը, ապագայում՝ Պողոսը) վայր է ընկնում ձիուց ու մի ձայն է լսում. **«Սավո՛ղ, Սավո՛ղ, ին-**

չնու ես Ինձ հալածում»։Բայց այն մարդիկ, որ նրա հետ գնում էին, ապուշ կանգնած էին. ձայնը լսում էին, բայց ոչինչ չէին տեսնում»։

Մեր Տերը կարող է խոսել լսելի ձայնով, բայց չպետք է մոռանանք, որ համաճայն Աստվածաշնչի՝ Նա հազվադեպ է խոսում բարձր, բոլորին լսելի ձայնով։

2. Աստված խոսում է Սուրբ Հոգու միջոցով՝ տալով ներքին վկայություն։

Սուրբ Հոգին, առանց որևէ բառ ասելու, կարող է մարդուն արգելել, ետ պահել որևէ գործ ձեռնարկելուց։ Մարդը ոչ մի ձայն չի լսում, բայց հստակ գիտի, որ պետք է կանգ առնի։ Կարող է լինել նաև հակառակը՝ Սուրբ Հոգին, առանց որևէ բառ ասելու, մարդուն առաջնորդում է որևէ գործ ձեռնարկելու։ Նմանատիպ դեպքերում Տերը խոսում է ներքին վկայության միջոցով։ Նա ներքին վկայության միջոցով կարող է մարդուն ցույց տալ իր գործած մեղքը կամ հիշեցնել տվյալ պահի համար անհրաժեշտ որևէ դեպք կամ խոսք։ Սուրբ Հոգին ներքին վկայության միջոցով կարող

է առաջնորդել դեպի ճշմարտությունը: **«Բայց երբ որ Նա՝ ճշմարտության Հոգին, կգա, Նա կառաջնորդի ձեզ ամեն ճշմարտության մեջ, որովհետև Իր անձից չի խոսի, այլ ինչ որ կլսի՝ կխոսի, և գալու բաները կպատմի ձեզ»** (Հովհ. 16.13-15):

Մարդը Սուրբ Հոգու ձայնը լսելու, ներքին վկայություն ունենալու և այն ընկալելու համար պիտի միշտ, ամեն օր ժամանակ հատկացնի օտար լեզուներով աղոթքին: Ես հաճախ խնդրում եմ Տիրոջը, որ իմ հոգևոր զգայարաններն արթուն լինեն, և հատուկ դրա համար աղոթում եմ Սուրբ Հոգով՝ օտար լեզուներով: Մեր հոգևոր զգայարանները եթե արթուն չլինեն, մենք չենք տեսնի այն, ինչ Տերը ուզում է, որ տեսնենք, և չենք լսի այն, ինչ Տերը ուզում է, որ լսենք: Մենք կենթարկվենք մեր մտքին, մինչդեռ միշտ պիտի ունենանք բաց հոգևոր աչքեր և ականջներ, հոգևոր հոտառություն...

Աշխարհահռչակ քարոզիչ Քենեթ Հեգինն իր «Ինչպես առաջնորդվել Սուրբ Հոգով» գրքում գրում է. «Երկար տարիների ընթացքում ես մի ճշմարտություն սովորեցի: Կյանքի ցանկացած դժվար իրավիճակում ես դիմում եմ Սուրբ Հո-

գուն, ով իմ ներսում է: Ես սովորեցի աղոթել օտար լեզուներով: Երբ աղոթում եմ օտար լեզուներով, իմ ներսում տեսնում եմ, թե ինչ ուղղությամբ պիտի տանեմ աղոթքը: Դա նրանից է, որ իմ հոգին ակտիվ է. ոչ թե՛ մարմինս կամ միտքս, այլ՝ հոգիս, որի միջոցով Տերը պիտի առաջնորդի ինձ: **«Որովհետև եթե ես աղոթեմ օտար լեզվով, իմ հոգին է աղոթում, իսկ միտքս մնում է անպտուղ»** (Ա Կորնթ. 14.13): Մեծ մասամբ, երբ աղոթում եմ լեզուներով, տեսնում եմ, որ հանկարծ ինչ-որ տեղ իմ խորքում ինչ-որ բան է բարձրանում: Հետո, լեզուներով աղոթքը շարունակելիս, այդ ինչ-որ բանը ձև ու տեսք է ստանում: Ես հասկանում եմ, թե ինչ պիտի անեմ: Մտավոր մակարդակով՝ չեմ կարող բացատրել, թե դա որտեղից եմ իմանում, որովհետև իմ միտքը դրա հետ ոչ մի կապ չունի, բայց իմ ներսում գիտեմ, թե ինչ պիտի անեմ: Եվ ես հետևում եմ դրան»: Քենեթ Հեգինը կարողանում էր հետևել աղոթքի ընթացքին և ճիշտ ուղղություն ստանալ, քանի որ նրա հոգևոր տեսողությունը, լսողությունը, մի խոսքով՝ հոգևոր բոլոր զգայարաններն արթուն էին:

3. Աստված մարդու հետ խոսելու հիմնական միջոց է ընտրել Աստվածաշունչը:

Սուրբ Գիրքը թեպետ գրվել է տարբեր ժամանակաշրջաններում և ամենատարբեր մասնագիտության տեր մարդկանց կողմից, բայց գրվել է Աստծո Հոգու թելադրանքով: **«Ամեն Գիրք աստվածաշունչ է և օգտակար՝ վարդապետության, հանդիմանության, ուղղելու և արդարության խրատելու համար»** (Բ Տիմոթ. 3.16):

(Իմ բլոգում (gayanehakobyan.org) տեղադրել եմ մի հետաքրքիր գիրք՝ Մ. Պոզոգլյանի «Սուրբ Գրքի բառային ներշնչումը գիտականորեն ապացուցված» վերնագրով, որը օգնում է տեսնելու, որ տիեզերքը ստեղծողը և Աստվածաշունչը գրողը նույն Անձն է՝ կենդանի Աստված):

Ինչպես որ կա երթևեկության կանոնների ուղեցույց, որը պարտադիր է բոլոր վարորդների համար՝ անկախ նրանց ազգությունից ու սեռից, այնպես էլ կա երկրի վրա անվտանգ և օրհնված կյանքով ապրելու ուղեցույց՝ Սուրբ Գիրք, որը նախատեսված է բոլոր մարդկանց համար: Աշխարհն առայժմ սատանայի իշխանության ներ-

քո է, բայց երբ Աստծուն պաշտողները չեն վախենում ու կատարում են Տիրոջ պատվիրանները, Տերը վարձահատույց է լինում նրանց: Հետո 1.8,9-ում գրված է. **«Այս օրենքի գիրքը քո բերանից չհեռանա, այլ գիշեր ու ցերեկ նրա վրա մտածես, որ պահես ու կատարես ամբողջ նրա մեջ գրվածի պես, որովհետև այն ժամանակ ճանապարհները հաջողակ կանես և այն ժամանակ խելամուտ կլինես: Ահա քեզ պատվիրում եմ, զորացի՛ր և քաջ եղի՛ր. մի՛ վախեցի՛ր ու մի՛ զարհուրի՛ր, որովհետև քո Տեր Աստվածը քեզ հետ է ամեն տեղ, ուր որ գնաս»:** Շատերը կարող են օրերով, նույնիսկ տարիներով կարդալ Աստվածաշունչը և ոչինչ չհասկանալ: Աստվածաշունչում գրվածը մարդու համար բացում է Սուրբ Հոգին: Երբ Սուրբ Գիրքը կարդում ես առանց Սուրբ Հոգու առաջնորդության, կամ ընդհանրապես չես հասկանում, կամ տառացիորեն ես հասկանում, ինչը վտանգավոր է, որովհետև **«...գիրն սպանում է, իսկ Հոգին կենդանացնում է»** (Բ Կորնթ. 3.6): Աստվածաշունչում քիչ չեն միմյանց «հակասող» Խոսքերը, և մարդը պիտի Սուրբ Հոգով

առաջնորդվի՝ հասկանալու համար, թե տվյալ իրավիճակում ո՞ր Խոսքը պիտի կատարի: Հիսուսը, առաջնորդվելով Սուրբ Հոգուց, գնաց անապատ: Սատանան եկավ Նրան փորձելու: Նա Հիսուսին փորձում էր՝ համաճայն Աստծո Խոսքի: Հիսուսը նրան պատասխանում էր դարձյալ Աստծո Խոսքով, բայց՝ առաջնորդվելով Սուրբ Հոգով. «Այն ժամանակ Հիսուսը Հոգուց անապատ տարվեց, որ փորձվի սատանայից: Եվ քառասուն օր և քառասուն գիշեր ծոմ պահելուց հետո տվեց. «Եթե Աստծո Որդի ես, ասա՛, որ այս քարերը հաց լինեն»: Նա էլ պատասխան տվեց և ասաց. «Գրված է՝ ոչ միայն հացով կապրի մարդ, այլ ամեն խոսքով, որ դուրս է գալիս Աստծո բերանից»: Այն ժամանակ սատանան Նրան առավ տարավ սուրբ քաղաքը և կանգնեցրեց տաճարի աշտարակի վրա և ասաց Նրան. «Եթե Աստծո Որդի ես, Քեզ վայր զցիր, որովհետև գրված է, թե Իր հրեշտակներին կհրամայի Քեզ համար, և ձեռքերի վրա կբարձրացնեն Քեզ, որ Քո ոտքը քարի չդիպցնես երբեք»: Հիսուսը Նրան ասաց. «Դարձյալ գրված է, թե մի՛ փորձիր Տիրոջը՝ Քո

Աստծուն»: Դարձյալ առավ տարավ Նրան սատանան շատ բարձր սար և ցույց տվեց աշխարհի բոլոր թագավորությունները և նրանց փառքը և ասաց Նրան. «Սրանք ամենը Քեզ կտամ, եթե ընկած երկրպագես ինձ»: Այն ժամանակ ասաց նրան Հիսուսը. «Դե՛ն գնա, սատանա՛, որովհետև գրված է, թե Տիրոջը՝ Քո Աստծուն երկրպագիր և միայն Նրան պաշտիր»: Այն ժամանակ սատանան թողեց Նրան, և ահա հրեշտակները մոտ եկան և ծառայում էին Նրան» (Մատթ. 4.1-11):

Իմ՝ «Ուտքի՛ կանգնիր» վկայության խոսքում (կարդալ բլոգում՝ gayanehakobyan.org), որտեղ անդրադարձել եմ 30 տարի ձգվող հիվանդությունից իմ կատարյալ բուժմանը, նկարագրել եմ, թե ինչ պայքար էր գնում իմ ու դիվային աշխարհի միջև: Սատանան չէր ուզում, որ իմ կյանքում թագավորեր Գողգոթյան խաչի և Հիսուս Փրկչի արյան զորությունը: Աստվածաշնչից օրինակ էր բերում Ամբակում 3.17,18-ը. **«Թեև թզենին չծաղկի, և որթերի վրա բերք չլինի, ձիթենու արդյունքը ստի, և արտերը կերակուր չտան... սակայն ես Տերով պիտի ցնծամ, պիտի իմ փրկության Աստ-**

ծով ու րախա նամ»: Նա փորձում էր համոզել, որ ի սեր Աստծո՝ ես պետք է պատրաստ լինեմ մինչև կյանքիս վերջ տառապելու այդ սարսափելի գլխա ցա վերից: Սա կայն առաջնորդ վելով Սուրբ Հոգով՝ ես նրան հակահարված տվեցի աստվա-ծաշնչյան մեկ այլ խոսքով՝ Եսայի 53.5-ով. **« Բայց Նա մեր մեղքերի համար վիրավորվեց և մեր ա նօրի նուօյ յուն նե րի համար հարվածվեց, մեր խաղաղուօյ յան պատի ժը Նրա վրա դրվեց, և Նրա վերքերով մենք բժշկվեցինք»:** Նույն օրը ես ստացա իմ բժշկությունը, որով հետև առաջնորդվեցի Սուրբ Հոգով:

Աստվա ծաշուն չը կար դա լու ըն թացքում հան-կարծ ամբողջ գրքից մի բառ կամ նախադասուօյ-յուն առանձնա նում ու մխրճվում է մեր հոգու մեջ: Այդ Խոսքը մեր կյանքում լույս է վառում: Ի գուր չէ, որ գրված է. **« Բո խոսքը ճրագ է իմ ոտքերի համար, և լույս՝ իմ ճա նա պար հի համար»** (Սաղմ. 119.105): Աստվա ծաշն չում գրված Խոսքը կոչվում է «լոգոս» (Logos), իսկ երբ այն լուսավորվում է, խոսում մեզ հետ, կոչվում է «ռեմա» (Rema): Մենք պետք է մշտապես լինենք Տիրոջ հետ, որպես զի

յուրաքանչյուր անգամ Աստվածաշունչը կարդալիս մեր կյանքը փոխող հայտնություններ՝ «ռեմա» ստանանք:

4. Տերը կարող է խոսել մտքերի միջոցով:

Նոյը տապան կառուցելու պատվեր ստացավ Աստծուց. **«Եվ Աստված ասաց Նոյին. «Ամբողջ մարմնի վերջը եկել է, որովհետև երկիրը նրանց պատճառով լցվել է անիրավությանը, և ահա ես նրանց պիտի փչացնեմ երկրի վրա: Հիմա դու քեզ համար խիժաբեր փայտից մի տապան շինիր, և տապանը խորշերով լինի....»** (Ծննդ. 6.13-16): Աստված Նոյին տապանի արտաքին տեսքի հետ կապված պատվերներ տվեց: Երբ Նոյը կառուցեց տապանը, Տերը կրկին խոսեց նրա հետ. **«Եվ Եհովան ասաց Նոյին՝ մտիր դու և քո ամբողջ տունը տապանի մեջ...»** (Ծննդ. 7.1): Գիտնականներն ասում են, որ տապանը կառուցվել է 100 տարվա ընթացքում: Ոչ ոք չի կարող հերքել, որ այդ տարիների ընթացքում Նոյն առաջնորդվում էր Տիրոջով: Եթե Աստված Նոյին չառաջնորդեր, մտքեր չտար, ինչպե՞ս նա կկարողանար ստեղծել,

կառուցել այդքան հզոր տապան, որը դիմացավ երկրագունդը քարուքանդ անող ջրհեղեղին, այն դեպքում, երբ «Տիտանիկ» կոչվող հանրահռչակ նավը, որի վրա խոշոր գիտնականներ էին աշխատել, բախվելով մի սառցաբեկորի, ավերվեց: Անշուշտ, Նոյը կառուցեց մի տապան, որի նախօրինակը չէր տեսել, առավել ևս, նա երբեք անձրև չէր տեսել: Մեր առօրյայում էլ Տերը կարող է խուսել մեր մտքերի հետ՝ առաջնորդելով մեզ որևէ գործ իրականացնելու:

Մի անգամ իմ աշխատանքային ընկերներից մեկը, փորձելով կատակել, վերցրել էր ինձ համար կարևոր նշանակություն ունեցող մի իր ու պահել: Աշխատանքն ավարտելուց հետո նա դուրս էր եկել աշխատասենյակից ու մոռացել իր պահած իրի մասին: Ես սկսեցի փնտրել, բայց ոչ մի կերպ չէի գտնում կորած իրը: Նյարդայնացած զանգում էի ընկերոջս, բայց հեռախոսազանգերն ապարդյուն էին: Փորձեցի խաղաղվել ու աղոթել: Սուրբ Հոգին ինձ առաջնորդեց դեպի սենյակի անկյունում գտնվող պահարանը, այնուհետև, ցույց տալով պահարանի վրա դրված սափորը,

ասաց, որ այդ իրը սափորի մեջ է: Ես խնդրեցի մեր պարետին, որ մի երկար աստիճան բերի, և այդ սափորն իջեցնենք: Կորած իրը, իրոք, սափորի մեջ էր: Կարո՞ղ եք պատկերացնել, թե ինչպիսին էր ընկերոջս դեմքի արտահայտությունը, երբ նա հաջորդ օրը սեղանիս վրա տեսավ այդ իրը...

5. Տերը կարող է խոսել առարկաների միջոցով:

Վառվող, բայց չմոխրացող մորենուն ուշադրություն դարձնելու շնորհիվ էր, որ Մովսեսը Տիրոջից առաջադրանք ստացավ՝ հրեա ժողովրդին Եգիպտոսի երկրից հանելու: «Եվ Մովսեսը Մադիամի քուրմի՝ իր աներոջ Հոթորի հոտը արածեցնում էր, և հոտը անապատի ետևը քշելով Աստծո Քորեբ սարը եկավ: Եվ Եհովայի հրեշտակը կրակի բոցով երևաց նրան մորենու միջից, և նա տեսավ, որ ահա մորենին կրակով վառվում էր, բայց չէր սպառվում: Եվ Մովսեսն ասաց՝ մեկ դառնամ ու տեսնեմ այս մեծ տեսարանը, թե ինչու համար մորենին չի այրվում: Եվ Եհովան տեսավ,

որ նա դարձավ տեսնելու, և Աստված մորենու միջից կանչեց նրան և ասաց. «Մովսէս, Մովսէս», և նա ասաց. «Ահա՛ ես»: Եվ ասաց. «Այս տեղին մի՛ մոտեցիր. կոշիկներդ հանիր ոտքերիցդ, որովհետև այն տեղը, որի վրա դու կանգնել ես, սուրբ երկիր է» (Ելից 3.1-5): Անհրաժեշտ է զգոն լինել: Տերը շատերի հետ կարող է խոսել այս եղանակով, բայց քչերը կարող են հասկանալ: Ես նկատի չունեմ, որ ամեն թփի տակ աստվածային նշան պիտի փնտրենք, պարզապես, երբ զգոն ենք և մշտապես առաջնորդվում ենք Սուրբ Հոգով, կհասկանանք, թե որ պատկերը կամ առարկան է մարգարեական ուղերձ պարունակում: Բաղաամի նման մարգարեն այնքան կլանված էր նյութական պարզև ստանալու մոլուցքով, որ ոչ միայն Տիրոջը չէր լսում, այլև չզարմացավ, երբ էշը մարդկային ձայնով խոսեց: Հարստանալու մոլուցքը նրան դրդեց՝ զգաստանալու փոխարեն երկխոսության մեջ մտնել էշի հետ:

6. Տերը կարող է խոսել երազներով ու տեսիլքով:

Մեզ հայտնի են Հովսեփի մարգարեական երազները. «Եվ Հովսեփը մի երազ տեսավ և իր եղբայրներին պատմեց: Եվ նրանք ավելի առեցին նրան....» (Ծննդ. 37.5-11): Մարգարեական երազներ էին տեսնում նույնիսկ Փարավոնի ծառաները՝ մատովակապետն ու հացագործապետը, ովքեր Հովսեփի հետ նույն բանտում էին: «Եվ նրանք ասացին նրան. «Երազ ենք տեսել և այն մեկնող չկա»: Եվ Հովսեփն ասաց նրանց. «Ահա մեկնությունները Աստծուն են վերաբերում. խնդրեմ, պատմե՛ք ինձ»: Եվ մատովակապետը պատմեց իր երազը Հովսեփին և ասաց նրան. «Երագումս տեսա, որ առջևս մի որթ կար, և այն որթի վրա երեք ուռ կային, և հենց որ բողբոջեց՝ ծաղիկ տվեց, և նրա ողկույզները խաղող հասցրին: Եվ Փարավոնի բաժակը իմ ձեռքին էր, և խաղողները առա և Փարավոնի բաժակի մեջ ճմլեցի և գավաթը Փարավոնի ձեռքը տվի»: Եվ Հովսեփը նրան ասաց. «Սա է դրա մեկնությունը. երեք ուռը երեք օր է: Երեք օր հետո Փարավոնը

քո գլուխը կբարձրացնի և քեզ դարձյալ քո պաշտոնի վրա կդնի, և Փարավոնի բաժակը նրա ձեռքը կտաս այն առաջվա սովորության պես, երբ որ նրա մատովակն էիր» (Ծննդ. 40.8-13):

«Եվ հացագործապետը տեսավ, որ լավ մեկնեց, ասաց Հովսեփին. «Ես էլ երազումս տեսա, որ գլխիս վրա երեք նաշիհի սակառ ունեի: Եվ ամենի վրայի սակառի մեջ կար Փարավոնի բոլոր կերակուրներից, որ հացագործը շինում է, և թռչունները ուտում էին դրանք գլխիս վրայի սակառից»: Եվ Հովսեփը պատասխանեց և ասաց. «Սա է դրա մեկնությունը. երեք սակառը երեք օր է: Երեք օր հետո Փարավոնը քո վրայից վեր կառնի քո գլուխը և քեզ մի ծառից կկախի, և թռչունները քո վրայից կուտեն քո մարմինը» (Ծննդ. 40.16-19):

Գործք 10.9-16-ում գրված է, թե ինչպես Պետրոսը երեք անգամ տեսավ նույն տեսիլքը՝ երկինքը բացված ու կտավի նման մի անոթ երկնքից իջնելիս, որի մեջ կային ամեն տեսակի չորքոտանի կենդանիներ, սողուններ ու թռչուններ: Աստված այս տեսիլքով Պետրոսին առաջնորդում էր՝ քա-

րոզելու հեթանոսներին: Այս տեսիլքը հեղաշրջում բերեց, սրա շնորհիվ է, որ մենք այսօր Հիսուս Քրիստոսին ճանաչում ենք որպես մեր կյանքի Տեր ու Փրկիչ, որովհետև մենք էլ մի ժամանակ հեթանոս էինք:

Մարդը կարող է տեսիլք տեսնել նաև իր կենցաղային հարցերի վերաբերյալ: Տարիներ առաջ էր: Մի առավոտ, երբ գնում էի ծառայության, բաց աչքերով մի տեսիլք տեսա. ես նստած էի մի սպիտակ մեքենայի դեկի առջև: Այդպիսի տեսիլք առաջին անգամ էի տեսնում ու մի պահ կարկամեցի: Հետո տեսիլքն անհետացավ: Նույն օրը՝ երեկոյան, հանդիպեցի իմ հովվին: Նա ասաց, որ առավոտից ինձ է փնտրել՝ ցանկանալով տեղեկացնել, որ անպայման մեքենա վարել սովորեմ և վարորդական իրավունք ստանալու համար քննություններ հանձնեմ: Անցան ամիսներ, ես արդեն սովորել էի մեքենա վարել և վարորդական իրավունք էի ստացել: Մի օր եկեղեցու ծառայողներով հավաքվել էինք աղոթելու: Երբ աղոթքածառայությունն ավարտվեց, հովիվն առաջարկեց, որ յուրաքանչյուրս աղոթենք

մեր անձնական կարիքների համար: Այդ պահին իմ մեջ բուռն ցանկություն առաջացավ՝ աղոթելու մեքենա ունենալու համար: Հիշելով ամիսներ առաջ իմ տեսած տեսիլքը՝ ես Աստծուն հարցրի. «Տէր, մի քանի ամիս առաջ Դու տեսիլքով ցույց տվեցիր, որ ես մեքենայի ղեկի առջև նստած եմ: Հիշում եմ, որ այդ մեքենան սպիտակ գույնի էր, բայց ինչ մակնիշի էր՝ չգիտեմ: Խնդրում եմ, ասա ինձ՝ դա ինչ մակնիշի մեքենա էր»: Ես անմիջապես ստացա պատասխանը՝ BMW: Անկեղծ ասած, մինչ այդ նմանատիպ երկխոսություն չէի ունեցել տիեզերքը ստեղծող արքաների Արքայի հետ: Ես շարունակեցի իմ աղոթքը. «Տէր, տուր ինձ սպիտակ BMW»: Չորս ամիս հետո գերբնական հրաշքով ես ունեցա BMW մակնիշի սպիտակ մեքենա: Մեքենան ինձ համար շքեղություն չէ, ոչ էլ հարստության ցուցանիշ, այլ՝ անհրաժեշտություն, Տիրոջն ու մարդկանց արագ և որակով ծառայելու միջոց: Տերը հոգում է մեր բոլոր կարիքների մասին, պարզապես, մենք պիտի միշտ զգոն լինենք Նրա Խոսքին՝ ինչ ձևով էլ, որ այն արտահայտվի:

**7. Տերը կարող է խոսել մարդու հետ,
երբ նա պատրաստում է իր սիրտը,
առանձնանում ծածուկ սենյակում և
աղոթում որևէ խնդրի շուրջ:**

Տերը խոսում է լռության մեջ, մեղմ ձայնով: Մինչ Տիրոջ խոսելը՝ աղոթողը պիտի հետևի Սուրբ Հոգու առաջնորդությանը: Հնարավոր է՝ Սուրբ Հոգին նրան առաջնորդի Տիրոջը երկրպագելու կամ էլ լռության մեջ նստելու և մտորելու: Մարդը պիտի լինի կատարյալ հնազանդության մեջ՝ անի այն, ինչ Սուրբ Հոգին է ասում: Տերը գուցե խոսի այդ պահին, գուցե՝ հաջորդ օրը. Նա է որոշում, թե երբ խոսի:

«Հիսուս Քրիստոսի խաչի և արյան գործունը» քարոզում ես խոսում եմ իմ վահանաձև գեղձի բժշկության մասին: Ամբողջ օրն անցկացնելով ծոմի, աղոթքի և երկրպագության մեջ՝ Տիրոջից իմ բժշկության հետ կապված Խոսք էի խնդրում: Մինչև երեկոյան ժամը 9-ը Տերը չխոսեց: Այդ ամբողջ ընթացքում իմ սենյակից դուրս չէի եկել, բայց երեկոյան ուղիղ ժամը 9.00-ին Աստված ասաց, որ կարող եմ ընթրել: Ես ընթրեցի ու կրկին

սպասում էի Խոսքի: Հետո գնացի քնելու: Գիշերը՝ ժամը 2-ին, Սուրբ Հոգին ինձ մեղմորեն արթնացրեց ու Խոսք տվեց բժշկությանս վերաբերյալ:

Մեկ այլ անգամ կրկին աղոթում էի մի խնդրի շուրջ ու Տիրոջից Խոսք ուզում: Խնդիրն այն էր, որ հագուստներս մեկը մյուսի ետևից անհետանում էին մեր տնից: Սկզբում ուշադրություն չէի դարձնում, բայց հետո, երբ հերթը հասավ իմ սիրելի՛ հագուստներին, լրջորեն անհանգստացա: Իմ անհանգստության պատճառն արդեն ոչ թե հագուստներիս անհետացումն էր, այլ այն, թե ինչ եմ արել, որ իմ սիրելի իրերը կորչում են անհասկանալի ձևով: Առանձնացա սենյակումս ու սկսեցի աղոթել: Ոչ մի պատասխան: Դա ինձ ավելի անհանգստացրեց: Հաջորդ օրը ծոմ պահեցի ու Տիրոջն ասացի. «Տէր, Դու սիրտ ու երիկամունք քննող Աստված ես, ու հիմա տեսնում ես, որ իմ անհանգստության պատճառը ոչ թե կորած հագուստներս են, այլ այն հարցը, թե ինչու են իմ սիրելի իրերն անհետանում»: Այնուհետև սկսեցի աղոթել լեզուներով: Մոտավորապես 15 րոպե անց Տերն սկսեց խոսել: Նա ինձ ներկայացրեց մի քանի դրվագ՝ մանրամասն նկարագրելով բնավորությանս գծերից մի քանիսը, որոնք խան-

գարում էին Իրեն՝ դրսևորելու Իր անսահմանափակ բնավորությունն իմ կյանքի որոշ բնագավառներում: Ես ուխտ արեցի՝ փոխվել և իմ սահմանափակ բնավորությամբ այլևս չխոչընդոտել տերերի Տիրոջը: Իմ աղոթքը և ուխտը անկեղծ էին: Տերը դա տեսավ ու աղոթքից անմիջապես հետո Սուրբ Հոգու առաջնորդությամբ ինձ ուղեցեց այն պահարանի մոտ, որտեղ իմ կորած հագուստներն էին. մեկ շաբաթ շարունակ ես տակնուվրա էի արել ամբողջ պահարանը, բայց այդ հագուստները չէի տեսել: Հետաքրքիրն այն էր, որ երբ պահարանի դուռը բացեցի, դրանք կախված էին ուղիղ իմ դիմաց:

Տիրոջ համար նշանակություն չունի, թե ինչ հարցով ենք մոտենում Իրեն՝ կենցաղային մանր խնդիրներով, թե՛ բազմաթիվ մարդկանց կյանքերին վերաբերող գլոբալ հարցերով: Կարևորը ճիշտ սրտով, մաքուր շարժառիթներով ու հավատքով մոտենալն է:

Թագավորաց չորրորդ գրքի 19-րդ գլխում գրված է, թե երբ և ինչպես Տերը պատասխանեց Եզեկիա թագավորին: Ամբողջ Իսրայելը անելանելի վիճակի մեջ էր, քանի որ թշնամին շրջա-

պատել էր երկիրը և ծաղրում էր Եզեկիային ու նրա Եհովա Աստծուն: **«Եվ երբ Եզեկիա թագավորը լսեց, պատառեց իր հանդերձները և քորձ հագավ ու գնաց Տիրոջ տունը»** (Դ Թագ. 19.1): Նույն գլխի 14-19-րդ խոսքերում ներկայացված է, թե ինչպես էր Եզեկիան աղերսում Տիրոջը և պատասխանի սպասում: Պատասխանը չուշացավ. Տերը Եսայի մարգարեի շուրթերով մի փառահեղ պատասխան ուղարկեց նրան. **«...Ես կպաշտպանեմ այդ քաղաքը, որ ազատեմ՝ Ինձ համար և Իմ ծառա Դավթի համար»** (Դ Թագ. 19.20-34): Գրված է, որ այդ գիշեր Տիրոջ հրեշտակը դուրս եկավ և զարկեց թշնամու բանակում հարյուր ութսունհինգ հազար մարդ: Եվ երբ որ առավոտյան վեր կացան, շուրջբոլորը դիակներ էին, ու Ասորեստանի թագավորը չվեց գնաց դարձյալ Նինվե:

8. Տերը կարող է խոսել լռելով:

Լինում են դեպքեր, երբ մենք երկար ժամանակ աղոթում ենք որևէ խնդրի համար, աղերսում Տիրոջը, որ խոսի: Պատասխանը՝ լռություն: Դա նույնպես խոսելու ձև է: Տերը, լուռ մնալով, մեզ

ուղորդում է ծածուկ սենյակ: Ծածուկ սենյակում մենք պետք է հիշենք, թե Տերը վերջին անգամ երբ է խոսել մեզ հետ և ինչ է ասել: Լինում են դեպքեր, երբ Տերը խոսում է, առաջարկում, երբեմն էլ պատվիրում անել այս կամ այն գործը, բայց մարդը, մոռանալով, զգոն չլինելով կամ պարզապես անհնազանդ գտնվելով, չի կատարում Տիրոջ Խոսքը: Տերը լուր է: Նման դեպքերում Նրա լուրջունը նշանակում է խոսել և ասել. «Սիրելիս, վերջին անգամ Ես քեզ ինչ պատվիրեցի...»:

9. Տերը կարող է խոսել՝ մարդուն ցնցող փաստի առջև կանգնեցնելու միջոցով, երբ նա ինչ-որ պատճառով դուռ է բացել սատանայի առջև և դուրս է եկել Տիրոջ պաշտպանությունից:

Մովսեսի մահից հետո Տերը Հեսուին խոստանում է միշտ նրա հետ լինել: Հեսուն յուրաքանչյուր անգամ վճռորոշ քայլ անելիս առաջնորդվում է Տիրոջ Խոսքով: Տիրոջ Խոսքով առաջնորդվելով՝ նրանք անցնում են Հորդանանը (տե՛ս Հեսու 3.9-17), տեսնում Երիթովի պատերի

քանդվելը (տե՛ս Հեսու 6.1-20): Այնուհետև Հեսուն լրտեսներ է ուղարկում դեպի Գայի: Լրտեսները վերադառնում ու տեղեկացնում են, որ Գային գրավելու համար հարկ չկա տանելու ամբողջ բանակը. **«...միայն երկու կամ երեք հազար մարդու չափ վեր գնան և Գային կգարկեն. ամբողջ ժողովրդին մի աշխատեցրու այնտեղ տանելով, որովհետև նրանք քիչ են»** (Հեսու 7.3): Հեսուն լսում է լրտեսներին: Նա չի աղոթում և Գային գրավելու համար Տիրոջից խոսք չի ստանում: Եվ ահա, 3000 զինվոր ներխուժում են Գայի, բայց շուտով փախչում են այնտեղի ժողովրդի առջևից, նույնիսկ զոհեր են ունենում: Գրված է, որ Իսրայելի ժողովրդի սիրտը **«հալվում ու ջուր է դառնում»** (Հեսու 7.5): Հեսուն ցնցող փաստի առջև է կանգնում: Նա Տիրոջից խոստում ուներ՝ միշտ հաղթելու, բայց մոռացել էր, որ պետք է Տիրոջից առաջնորդություն ստանար՝ ինչ անի, որ հաղթի: Գայիի վրա հարձակվելու ծրագիրը ոչ թե լրտեսները պիտի տային, այլ՝ Տերը: Լրտեսների գործն էր՝ պատմել այն, ինչ տեսել էին, բայց նրանք ոչ միայն պատմեցին իրենց տեսածը, այլև մարդկո-

րեն առաջարկեցին Գային գրավելու ռազմավարությունը: Եթե Հեսուն Տիրոջից հարցներ, Տերը նրան կտեղեկացներ, որ բանակում անհնազանդություն, գողություն և սուտ կար. Աքարը գողացել էր ավարը և թաքցրել, մինչդեռ Տերը պատվիրել էր ձեռք չմեկնել ավարին: Այդ մեղքի պատճառով էլ Իսրայելի բանակը խայտառակ պարտության էր մատնվել:

Այս ամենից հետո Հեսուն արդեն առաջնորդվելով Տիրոջ խոսքով՝ պատժում է մեղավորին ու դարձյալ Տիրոջ խոսքով հարձակվում Գայի քաղաքի վրա: Գային գրավելու ռազմավարության մեջ Տերը մեծ փոփոխություն էր մտցրել. լրտեսներն ասում էին՝ 2000-3000 զինվորը բավական է, քանի որ Գայիում շատ մարդ չկա, բայց Տերը Հեսուին պատվիրում է վերցնել բոլոր պատերազմող մարդկանց և տալիս է դարան ու դարանակալներ պատրաստելու ռազմավարությունը, որ մանրամասնորեն ներկայացված է Հեսուի 8-րդ գլխում: Սա ինչ է նշանակում: Տերը ուզում էր խուսել, Նա որոշել էր հաղթանակ տալու ճանապարհը: Հեսուն թեև Տիրոջից ստացել էր այն Խոսքը՝

որտեղ իրենց ոտքերը դնեն, իրենցն է՝ **«Բոլոր տեղերը, որ կոխեն ձեր ոտքի թաթերը, ձեզ պիտի տամ....»** (Հետու 1.3), բայց մոռացել էր, որ Տերը հաղթանակ տալուց առաջ պիտի հնարավորություն ստանար խոսելու և ասելու, թե ինչպես ոտք դնեն այս կամ այն տարածք, որ հաղթեն:

Ես մի սովորություն ունեմ. յուրաքանչյուր նոր տարվա սկզբին՝ հունվարին, կազմում եմ ամբողջ տարվա համար նախատեսված կարևորագույն գործերիս ցուցակը, այնուհետև որոշված ժամանակահատվածներում իրագործում: 2014 թվականի հունվարին, սովորության համաձայն, կազմեցի այդ տարվա համար նախատեսված գործերիս ցուցակը: Մի օր՝ երեկոյան, հագուստներս էի պատրաստում, որ առավոտյան մի երկկողմանի ծնողագուրկ աղջկա հետ գնայի ջրաշխարհ: Այդ պահին հստակ զգացի, որ Սուրբ Հոգին ինձ առաջարկում է հաջորդ օրը մնալ տանը և աղոթել: Ես հակաճանեցի՝ մտածելով. «Ինչպե՞ս մնամ տանը: Խեղճ աղջկան արդեն խոստացել եմ, հո չեմ զանգի նրան ու հիասթափեցնի»: Հետո, հասկանալով, որ ինձ հետ խոսողը տերերի

Տերն է, ասացի. «Լավ, լույսը կբացվի, մի բան կանեն»: Գնացի քնելու: Լույսը բացվեց: Ես բացարձակ չէի հիշում Սուրբ Հոգու առաջարկի մասին: Տնից դուրս եկա: Մենք հիանալի ժամանակ անցկացրինք ջրաշխարհում: Երեկոյան՝ տուն վերադառնալիս, մեքենայով անցնում էինք Հերացի փողոցով, որտեղ երթևեկությունը միշտ ծանրաբեռնված է լինում: Այդ օրը կիրակի էր, և փողոցը դատարկ էր: Երբ նայեցի հայելու մեջ, հեռվից հագվիվ նշմարվող մի մեքենա էր երևում: Ես այդ աղջկա հետ զրուցելով հանգիստ վարում էի մեքենան: Երբ արգելակեցի կարմիր լույսի տակ, հանկարծ ետևից եկող մեքենան ուժգին բախվեց իմ մեքենային: Ես ապշեցի: Ինչպե՞ս պատահեց, որ այդ լայն փողոցում, որտեղ ուրիշ ոչ մի մեքենա չկար, մեր ետևից եկող մեքենան այդպես ուժգին բախվեց իմ մեքենային, այն դեպքում, երբ ազատ կարող էր փոխել իր ընթացքը:


Վթարի հետ կապված հարցերը կարգավորելուց հետո գնացի տուն: Անմիջապես առանձնացա, որ աղոթեմ ու Տիրոջից հարցնեմ այդ արտառոց դեպքի պատճառը: Դեպքն արտառոց էր

նրանով, որ վթարի ոչ մի հնարավորություն ու պատճառ չկար: Այդ լայն փողոցում ընդամենը իմ մեքենան էր ու հեռվից դանդաղ եկող մյուս մեքենան, որն ազատ կարող էր փոխել գծերը: Ես հասկանում էի, որ ինչ-որ մի բան սխալ եմ արել: Առանձնացա իմ սենյակում ու հարցրի Տիրոջից, թե ինչու այդպիսի դեպք տեղի ունեցավ: Ես այնպես կուզեի, որ Տերն ասեր. «Դա տեղի ունեցավ, որովհետև քո ետևից եկող մեքենայի վարորդը խախտեց օրենքը ու չկանգնեց կարմիր լույսի տակ», կամ՝ մեկ այլ բան, որն ինձ կարդարացներ: Տերն ասաց, որ ինձ զգուշացրել էր՝ մնամ տանը և աղոթեմ: Սրտիս խորքից ապաշխարեցի: Ինձ համար մեծ ցավ էր, որ Սուրբ Հոգուն նախորդ երեկո այնպես էի տրտմեցրել իմ անզգույշ արտահայտությամբ, երբ ասել էի. «Լավ, լույսը կբացվի, մի բան կանեմ», որ Նա առավոտյան ինձ չէր հիշեցրել Տիրոջ առաջարկը՝ տանը մնալ և աղոթել: Ապաշխարելուց հետո խնդրեցի, որ Տերն ինձ ասի, թե ինչու պիտի մնայի տանը և ինչի համար պիտի աղոթեի: Փնոք մեր ներող ու ողորմած Տիրոջը, որ պատասխանեց: Նա ասաց,

որ աղոթքը դեռևս տարեսկզբին իմ որոշած ծրագրերին էր վերաբերում: Ես վերցրի այն թուղթը, որտեղ գրառված էին այդ ծրագրերը: Առաջին 7-ը վերաբերում էին Աստծուն լիարժեք ծառայելուն: Տերն ասաց, որ առաջին տեղում պիտի լինի իմ առանձին բնակարան ունենալու հարցը: Բնակարանի մասին ես ոչ մի տեղ չէի նշել, քանի որ Երևանի փոքր կենտրոնում հարմարավետ տուն ունեինք, որտեղ ապրում էի հորս ու քրոջս հետ, ու չէի էլ մտածում առանձնանալու մասին: Հաջորդ ուղղումը Տիրոջից այն էր, որ պիտի փոխեի ցուցակումս նշված ծրագրերի առաջնահերթությունները: Այն, ինչը ինձ համար կարևորագույնն էր, Տիրոջ համար այնքան էլ կարևոր չէր: Հնազանդվելով Տիրոջը՝ ես փոխեցի առաջնահերթություններս: Այդ նույն օրը աղոթեցի առանձին բնակարան ունենալու համար: Աղոթքից հինգ օր հետո գերբնական հրաշքով ստացա նոր բնակարան: Այդ տունն ինձ համար անպատմելի օրհնություն է: Նոր բնակարան տեղափոխվելուց հետո Տերը խոսեց նոր ծրագրերի մասին, որոնք իրականացնելու համար առավել շատ ժամանակ ու նվիրում

էր պահանջվում: Ես հասկացա առանձին բնակարան ունենալու անհրաժեշտությունը: Տերը չի մտածում միայն Իր ծրագրերն իրականացնելու մասին: Նա սիրող ու ողորմած Հայր է և շտկում է մեր ընթացքը, որպեսզի մենք և՛ ծառայենք Իրեն՝ ծառայելով մարդկանց, և՛ վայելենք կյանքը՝ իր հրաշալիքներով հանդերձ:


Սիրելիներս, առաջնորդվելով Սուրբ Հոգով՝ ես այս կտրվածքով անդրադարձա Տիրոջ ճայնը լսելու թեմային: Որքան հնազանդ լինենք Նրա Խոսքին, որքան շատ ժամանակ հատկացնենք Նրան ավելի լավ ճանաչելուն, այնքան արագ կփոխվի մեր կյանքի ընթացքը, և մեր վկայության խոսքով կփառավորենք տերերի Տիրոջը՝ միակ ճշմարիտ Աստծուն:



«Աղքատությունը մտածելակերպ է, թե՛ սոցիալական վիճակ»

Գայանե Հակոբյանն այս գրքում խոսում է այն վերաբերմունքի մասին, որն ունի Աստված մարդու ֆինանսական օրհնության բնագավառի վերաբերյալ, և ցույց է տալիս

օրհնության այդ բնագավառ մտնելու աստվածաշնչյան բանալիները:



«Վախ»

Գրքում ներկայացվում է վախ երևույթը, նրա ծնունդը, զարգացման պատճառը և նրանից ազատվելու ճանապարհը՝ համաձայն Աստվածաշնչի:

Հեղինակն անդրադառնում է այնպիսի հարցերի, որոնց, շատ հաճախ, մարդիկ բախվում են:



Յուրաքանչյուր վերստին ծնված քրիստոնյա պետք է ունենա գիտություն՝ տարբերելու Աստծո ձայնը թե՛ սատանայի ձայնից, թե՛ իր իսկ մարմնի ու շնչի ցանկության թելադրանքից:

Այս գիրքը կօգնի ընթերցողին՝ լսել և տարբերել Աստծո ձայնը և հասկանալ, թե ինչպես է Նա խոսում:

Գայանե Հակոբյանի և նրա ծառայության մասին ավելին
իմանալու համար այցելեք՝ gayanehakobyan.org



Gayane Hakobyan

ISBN 978-9939-1-0390-7



9 789939 103907 >

